

շէին գերանելին Ղեւոնդ՝ այլքն կտրեցին սրով զգլուխ սրբոյ երիցան Մուշէի եւ զսրբոյ երիցուն Արշէնայ¹ եւ զսրբոյ սարկաւագին Բաջաջայ. որոց ի ժամ վախճանին կատարմանն ասացեալ, *Տէր Յիսուս, ընկա՛լ զոգիս մերք*:

7 Եւ ապա աշխատեալ դահիճքն որ քարշէին զսուրբն Ղեւոնդ՝ ածին ի նոյն տեղիս սուղ ինչ ոգւով, ուր եւ այլ սուրբքն կատարեցան, եւ անդ հատին զգլուխ սրբոյն սուսերաւ. որ ի ժամ իւրոյ կատարմանն զուարթագին ձայնիւ ասաց. «Գոհանամ զքէն, Զրիստոս, որ բազում գթութեամբ քո աւգնեալ պահեցեր զիս ի մանկութենէ իմմէ եւ հասուցեր ի ժամս յայս, արժանի արարեր մասին սրբոց քոց. ի ձեռս քո, Փրկիչ, յանձն առնեմ զիոգի իմ»: 8 Եւ սուրբ Եպիսկոպոսն Սահակ կայր եւս սակաւ ոգւով². զորոյ յետ վախճանելոյն ամենեցուն կտրեցին զգլուխն սուսերաւ. որոյ մատուցեալ նուաղ ձայնիւ աղաւթս եւ ասացեալ զամենն՝ աւանդեաց զոգին:

9 Եւ այսպէս ի վեշտասաներորդում ամի թագաւորութեան Յազկերտի, որ արքսան եւ եաւթն³ էր ամսոյն հրոտից՝ պսակեցան սուրբքն վեցեքեան. սուրբ կաթողիկոսն Յովսէփ ի Վայոց⁴ ձորոյ, սուրբ Եպիսկոպոսն Սահակ յԴըշտունեաց, սուրբ երեցն Արշէն ի Բագրեւանդայ, սուրբ այրն Աստուծոյ Ղեւոնդ երեց ի Վանանդայ⁵, սուրբ երեցն Մուշէ յԱղբակոյ⁶, սուրբ սարկաւագն Բաջաջ յԴըշտունեաց, յԱպար աշխարհի, մերձ ի գեաւղն մոգուց որ անուանեալ կոչի Ռեւան⁷: 10 Եւ որպէս ստուգիւ եւ ջերմ խնդրով Կամսարականին Արշաւրայ հարցեալ ցերանելի Խուժիկն, եւ լուեալ ի նմանէ պատմեաց մեզ զխաւսս իւրաքանչիւր⁸ եւ զվախճան սրբոցն՝ գրեցաք հաւաստեալ:

11 Եւ գնացեալ ի բաց ի տեղւոջէն Վեհդենշապիոյ եւ այլ իշխանացն որ ընդ նմա էին, ընտրեալ արս ինն⁹ թուով՝ թողին ի տեղւոջն կազմ զինու. ընդ որս նախ առաջին ըստ Աստուծոյ ազդեցութեանն գերանելի Խուժիկն ընտրէր Վեհդենշապուհ եւ թողոյր աղաչելով, որպէս զկարի սեպհականագոյն եւ պիտոյ իւրում հրամանին: 12 Որոց հրաման տուեալ ասէին ցպահապանսն, թէ «Մինչեւ ցաւուրս տասն եւ կամ եւս աւելի պահեցե՛ք¹⁰ զգուշութեամբ

1 ՏՏ. սրբոյ երիցոյն Մուշէի եւ զսուրբ երիցոյն Արշէնայ

Բ Տե՛ս Գործ. Է 58:

2 ՏՏ. ոգով. 2. հոգւով

3 ՏՏ. քսան եւ հինգ. 2. *քնագրում*՝ իե, *լուսանցքում ուղղած այսպէս*

4 2. ի վայոյ

5 Գտ. ի Վանանդոյ

6 Գտ. յԱղբակայ

7 2. ըռեւան

8 ՏՏ. իւրաքանչիւր ուրուք

9 Կամ ըստ 2. տասն

10 ՏՏ. պահեսցեն